Մութալիբովի ուղերձը ԱՄՆի նախագահ Ջորջ Բուշին

«Ազատամարտ»ի ընթերցողներին ներկայացնելով ուղերձը, ցանկանում ենք նրանց ուշադրութիւնը հրաւիրել մի քանի հանգամանքների վրայ։ Այդ ուղերձի յղումը նախ եւ առաջ, նախընտրական քայլ է. չէ որ Սեպտեմբերի 8ին Մութալիբովը յամառ պայքարում պէտք է ձգտի պահպանել իր պաշտօնը։ Երկրորդ, Ադրբեջանի նախագահն իր այդ քայլով յուրօրինակ ճնշում է գործադրում Բուշի վրայ, որը համահունչ է մոսկովեան դիրքորոշմանը։ Եւ երրորդ, ձգտում է ամեն ինչ գլխիվայր շուռ տալ, հայրենի հողը պաշտպանողներին անուանելով ահաբեկիչներ։

Առաւել կարեւորն այն է, որ նա ուղերձում վճռականութիւն է յայտնում մինչեւ վերջ հասցնել ահաբեկիչների դէմ պայքարը։ Սա է ամենամտահոգիչը եւ պատասխանը բոլոր նրանց, ովքեր բանակցումների ընթացքով յոյս են յայտնում, թէ հակահայ հալածանքները վերջ կը գտնեն։

Առանց հետեւողական պայքարի ապահովութիւն լինել չի կարող։

Տպագրում ենք ուղերձի տեքստը.

«Պատիւ ունեմ հաւաստել Ձեզ իմ խորին յարգանքը եւ դիմել մի ուղերձով, որը կարեւոր նշանակութիւն ունի ոչ միայն Ադրբեջանում ապրող միլիոնաւոր մարդկանց ճակատագրի, այլ նաեւ նրանց համար, ովքեր բնակւում են ԽՍՀՄի Անդրկովկասեան ռեգիոնում։

Խօսքը վերաբերւում է Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ՝ հանրապետութեան Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում դեռեւս 1988 թուին ազգայնականների որոշակի շրջանակների կողմից հրահրուած բախմանը։

Ցանկանում եմ Ձեզ յայտնել, որ բախման պատճառը Ինքնավար մարզի նկատմամբ Հայաստանի անհիմն պահանջատիրութիւնն է։ Այդ տարածքը երբեք չի պատկանել Հայաստանին։ Այդ են վկայում բազմաթիւ գիտա-պատմական փաստաթղթեր, որոնք ոչ մի կասկած չեն յարուցում բոլոր նրանց մօտ, ովքեր փոքր ինչ ծանօթ են Անդրկովկասում բնակուող ժողովուրդների պատմութեանը։

Այդ պահանջատիրութիւնը ողբերգական է դարձել հայ եւ ադրբեջանցի ազգութեան 600 հազար մարդկանց ճակատագրում, ովքեր զրկուել են քաղաքացիութիւնից եւ մէկ, եւ միւս հանրապետութիւնում եւ դարձել են փախստականներ։

Ոչ մի դէպքում չփորձելով ազդել Ձեզ վրայ, ցանկանում եմ ընդգծել, որ երկու ժողովուրդների միջեւ ողբերգական հակամարտութեան մէջ ադրբեջանցիները մեղք չունեն։ Ադրբեջանը միշտ հարազատ տուն է եղել իր տարածքում բնակուող շատ ժողովուրդների, այդ թւում նաեւ հայերի համար, եւ մինչեւ այժմ առատաձեռնօրէն կիսել եւ այսօր էլ կիսում է իր բնական հարստութիւնները ու օրէնքի ուժով պաշտպանում է իր քաղաքացիներից իրաւունքները։

Այս ամենն, ինչ պատահել է հանրապետութիւնում բնակուող հայ քաղաքացիների հետ, այն ողբերգական բախումները, որոնք տեղի են ունեցել այս տարիներին, որոշակի շրջանակների կողմից հմտօրէն կազմակերպուած եւ թշնամանք սերմանելու յատուկ նպատակ ունեցող ակցիաների արդիւնք են։

Պարոն Նախագահ, համարձակւում եմ Ձեզ հաւատացնել, որ հայերի եւ ադրբեջանցիների յարաբերութիւններում անչափ աւելին են միաւորող, քան տարբերող գործօնները։ Կատարուածի պատճառ չեն եղել ոչ էթնիկական, ոչ ռասայական եւ ոչ էլ կրօնական գործօնները։ Դրա ապացոյցն են տասնեակ հազարաւոր ընտանեկան եւ ամուսնական կապերով միացած հայերն ու ադրբեջանցիները, որոնք այժմ դարձել են կրկնակի դժբախտ։ Նրանց միացրել է մի Աստուած, որին հաւատում են եւ քրիստոնեաները, եւ մուսուլմանները, հաւատում են եւ սիրոյ ուժին, որին աշխարհում ոչինչ չի կարող դիմադրել։

Մենք դատապարտում ենք բոլոր նրանց, ովքեր ձեռք են բարձրացրել այս դարաւոր բարեկամութեան վրայ, անկախ այն բանից հայ են նրանք, ադրբեջանցի, թէ ուրիշ որեւէ մէկը։

Մենք լի ենք մեր ժողովուրդների միջեւ ամուր, կայուն խաղաղութեան եւ համերաշխութեան հաստատման մեծ ցանկութեամբ։ Դրա գլխաւոր պայմանն է հանդիսանում Ադրբեջանի հայկական բնակավայրերում տեղաւորուած հայ ահաբեկիչների զինաթափումը, որոնք զինուած են ադրբեջանական ժողովրդի դէմ զանգուածային ոչնչացման միջոցներով։

Պրն. Նախագահ, մենք համոզիչ փաստեր ունենք այն ամենի մասին, ինչ յայտնում ենք Ձեզ ի գիտութիւն։

Ոչ մի ժողովուրդ չի հանդուրժի ոտնձգութիւն իր ինքնավարութեան եւ տարածքային ամբողջականութեան նկատմամբ։ Քաղաքակիրթ աշխարհը դատապարտում է նման ակցիաները։ Աշխարհը ծափահարում է Ձեզ, պրն. Նախագահ, Քուէյթի ազատագրման համար։ Ինչու՞ ԱՄՆի որոշ քաղաքական գործիչներ, ոչ առանց սփիւռքի ազդեցութեան, փորձում են ադրբեջանական ժողովրդի պայքարը գնահատել որպէս հայերի տեղահանութիւն եւ հալածանք նրանց նկատմամբ։ Որտեղի՞ց նման միամտութիւն։ Չէ՞ որ նրանք, ովքեր նման կարծիք ունեն ոչ մի անգամ չեն բարեհաճել գալ Ադրբեջան եւ համոզուել այն բանում, ինչ իրենք իրականում չտեսած, հրապարակային յայտարարութիւն են անում։

Այսօր մենք պայքարում ենք ահաբեկիչների դէմ։ Այդ պայքարը մենք կը հասցնենք մինչեւ վերջ։ Այն անհրաժեշտ է գիւղերի խաղաղ կեանքի, այդ թւում մինչեւ այժմ էլ Ադրբեջանում բնակուող 200 հազար հայերի համար։

Ցանկանում եմ նշել, որ Հայաստանում այսօր, փաստօրէն ադրբեջանցիներ չկան։ Վերջին 200 հազար ադրբեջանցիները վտարուել են 1988-89 բախումների ժամանակ։

Պրն. Նախագահ, մենք մեծապէս շահագրգռուած ենք ԱՄՆի հետ համագործակցելու։ Այսօր արդէն մի շարք համատեղ ձեռնարկութիւնների կազմաւորման շրջանակներում կան տնտեսական համագործակցութեան հեռանկարային եւ կոնկրետ ծրագրեր։ ԱՄՆի հետ մեր կապերը առաջնային կարեւորութիւն ունեն Ադրբեջանի ներքին զարգացման առումով։

Ես գոհ կը լինէի, եթէ Դուք, պրն. Նախագահ հնարաւոր համարէիք Ձեր անձնական ներկայացուցչին ուղարկել փոխադարձ շահագրգռուածութիւն ներկայացնող մի շարք հարցերի քննարկման եւ տարածքում ստեղծուած իրավիճակի մասին առարկայական տեղեկութիւններ հաւաքելու համար։

Ընդունեք յարգանքներիս հաւաստիքը Ձեզ եւ ԱՄՆի ժողովրդին»։